

Ինչպես աջակցել գենդերային բռնություն վերապրած անձանց, երբ ձեր բնակավայրում մասնագիտացված ծառայություններ չկան

Ուղեցույց հումանիտար ոլորտի աշխատակիցների համար. տարբերակ 2.0

2015 թ. սեպտեմբերին սկիզբ դրվեց հումանիտար աջակցության ոլորտում գենդերային բռնության դեմ պայքարի ՄԳՄՅ (Միջգերատեսչական մշտական հանձնաժողով) ԳԲ ուղեցույցի ստեղծման աշխատանքներին:

Հաջորդող 2016 և 2017 թվականներին ԳԲ ուղեցույցի ստեղծմանն աջակցող թիմը 18 երկրներում վերապատրաստել է հումանիտար ոլորտի 2500 աշխատակցի՝ 11 տարբեր ոլորտներում գենդերային բռնությանը վերաբերող ռիսկերի նվազեցմանն ուղղված իրենց ծրագրերը կազմելու աշխատանքներում:

Ոլորտների ու հանգամանքների բազմազանությանը զուգահեռ վերապատրաստման մասնակիցները ներկայացրել են իրենց հետաքրքրություններն ու կարիքները, թե **ինչպես է պետք աջակցել գենդերային բռնություն վերապրած մարդուն, երբ տարածքում չկան ԳԲ մասնագիտացված կառույցներ (կամ դեպի ԳԲ մասնագիտական ծառայություններ ուղղորդելու հնարավորություն):** Այլ մասնագետների ու համակարգող կառույցների հետ խորհրդակցելով՝ ակնհայտ է դառնում, որ այս մարտահրավերն առկա է տարբեր միջավայրերում և մասնագետների շրջանում:

Այս բացը լրացնելու համար ստեղծվել է ԳԲ ուղեցույցների ստեղծման և ԳԲ ոլորտի պատասխանատվությունների բաշխման խմբերի համատեղ հարթակ, որը մշակել է ռեսուրսների փաթեթ այն մասին, թե **ինչպես պետք է աջակցել ԳԲ վերապրած անձանց, եթե տարածքում չկան ուղղորդման հնարավորություններ կամ ԳԲ պատասխանատուներ:** Ռեսուրսների նման փաթեթը մշակվել է հարթակի մասնագետների, կողմնակի փորձագետների ու խորհրդակցությունների մասնակիցների փորձի հիման վրա 2017 թ. սեպտեմբերից մինչև 2018 թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում: Ավելին՝ այս ռեսուրսը համապատասխանում է առկա համաշխարհային մակարդակով կիրառվող գործիքներին, օրինակ՝ Գենդերային բռնության դեմ պայքարի և ապաստանի հարցերով մշտական հանձնաժողովի ուղեցույցը և ՓՄՅ (Փրկարարության միջազգային հանձնաժողով)/ՅՈՒՆԻՍԵՖ-ի՝ սեռական բռնությունից տուժած երեխաների խնամքի կազմակերպման ուղեցույցը:

Գրպանի ուղեցույցի 2018 թ. տարբերակի ռեսուրսների փաթեթն ընդգրկում է տպագրությունը, առցանց ու բջջային հավելվածները (արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն և հայերեն):

ԳԲ ուղեցույցի մասին

ԳԲ 2015 թ. ուղեցույցը (2005 թ. վերանայված տարբերակը) գործնական, փորձարկված գործիք է, որը կարող է ուղղորդել հումանիտար ոլորտի աշխատակիցներին, հակամարտությունից ու աղետներից տուժած համայնքներին դեպի այն անհրաժեշտ գործողությունները, որոնք կարող են մեղմել գենդերային բռնությանն առնչվող ռիսկերը և հանգեցնել ավելի ապահով ու արդյունավետ ծրագրերի մշակմանը: ԳԲ ուղեցույցը նախատեսված է գենդերային բռնության ոլորտից դուրս աշխատող անձանց համար, որոնք կարող են և պարտավոր են իրենց առօրյա գործունեությամբ իրենց մասնագիտական ոլորտներում նվազեցնել ԳԲ ռիսկերը: Կիրականացվի եռամյա ռազմավարություն, որի նպատակն է՝ ապահովել ԳԲ ուղեցույցի նկատմամբ հետաքրքրվածությունը, իրագրվածությունն ու հանձնառությունները:

ՈՐՆ Ե ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՆՊՏԱԿԸ

Ռեսուրսների փաթեթի նպատակն է՝ հումանիտար ոլորտի բոլոր մասնագետներին պարզ ու հասկանալի ուղղորդման միջոցով հստակ տեղեկություններ տրամադրել հետևյալի մասին.

- **Ինչպես աջակցել գենդերային բռնությունից տուժած անձին, ով ձեզ պատմել է եղելությունը, երբ ձեր տարածքում չկան ԳԲ մասնագիտացված կառույցներ** (կամ ուղղորդման մեխանիզմ/պատասխանատու անձ):

Ռեսուրսների փաթեթը հիմնված է համաշխարհային ստանդարտների վրա, որ վերաբերում են ԳԲ տուժած անձանց աջակցության ու տեղեկության տրամադրմանը՝ առանց նրանց լրացուցիչ վնաս հասցնելու: Խորհուրդ ենք տալիս տեղայնացնելու նշված ռեսուրսը ձեր երկրում ԳԲ մասնագետի օգնությամբ:

ԻՆՉ Ե ԸՆԴԳՐԿՎԱԾ ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՓԱԹԵԹՈՒՄ

- 1. Սույն նախաբանը** նկարագրում է ռեսուրսը և ներկայացնում ջատագովության ու համակարգման հիմնական ուղերձները:
- 2. Հուշաթերթիկ.** նախատեսված է ծրագրերի ղեկավարների, տեխնիկական համակարգողների, թիմերի առաջնորդների և այլ մասնագետների համար: Հիմնական նպատակն է՝ աջակցել բոլոր ոլորտների մասնագետներին՝ աշխատանքային թիմերին գրպանի ուղեցույցի սկզբունքները ներկայացնելու և դրանց իրականացման համար կարողություններ ձևավորելու գործում՝ որպես աջակցություն ԳԲ տուժած անձանց:

3. Գրպանի ուղեցույցը, որ նախատեսվում է բոլոր ոլորտների առաջնագծի աշխատակիցների համար, կարող է օգտագործվել որպես գեղեցիկ բնութագրի տուժած անձանց աջակցության վերաբերյալ տեղեկատվական հասանելի աղբյուր, եթե տարածքում չկան մասնագիտացված կառույցներ/ ուղղորդման մեխանիզմներ:

ՈՎ ԿԱՐՈՂ Է ԿԻՐԱՌԵԼ ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ:

Գրպանի ուղեցույցը ոչ ԳԲ մասնագետների համար է, որոնք ծառայություններ են տրամադրում խոցելի համայնքներին, ապահովում են հիգիենայի կանոնների պահպանումը, տրամադրում են առողջապահական ծառայություններ, կազմակերպում են ճամբարներ, ապահովում պաշտպանություն և այլն:

ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գրպանի ուղեցույցը նախատեսված է որպես գործառնական ռեսուրս այն դեպքերի համար, երբ բնութային տուժած անձը որոշում է կիսվել միջադեպի մանրամասներով հումանիտար ոլորտի աշխատակցի հետ: Այն ընդգրկում է պարզ աղյուսակ, ցուցումներ և հակացուցումներ և քայլ առ քայլ գործողություններ, որ հաջորդում են նախապատրաստվելու, տեսնելու, լսելու ու ուղղորդելու բաժիններին:

Գրպանի ուղեցույցում նաև հաշվի են առնվում երեխաների և դեռահասների, սեռական ու գեղեցիկության փոքրամասնությունների/ԼԳԲՏ, բնություն վերապրած անձանց ու հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության հնարավորությունները:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵՆՔ ԲԵՐԵԼ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

- **Առցանց.** www.gbvguidelines.org և www.gbvaor.net բարձր կամ ցածր լուծաչափով տպագրության համար
- **Ներբեռնելով** Google Play-ից կամ iTunes-ից: Որոնե՛ք **ԳԲ գրպանի ուղեցույց**

Զատագովությանն ու համակարգմանը վերաբերող հիմնական ուղերձները

1. ԳԲ ռիսկերը մեղմելու միջոցառումները, օրինակ՝ ՄԳՄՅ ԳԲ ուղեցույցում ներկայացվածները, ոչ միայն հանդիսանում են հումանիտար ոլորտի բոլոր աշխատակիցների պատասխանատվությունը, այլև բարելավում են հումանիտար աշխատանքի արդյունավետությունը բոլոր ոլորտներում:

ա. Յետևելով «մի՛ վնասիր սկզբունքիներ» և ՄԳՄՅ պաշտպանության առաջնահերթության մոտեցմանը, բոլոր ոլորտների հումանիտար աշխատակիցները պատասխանատվություն են կրում իրենց ծրագրերի այնպիսի նախագծման ու իրականացման համար, որ նվազագույնի հասցվեն ԳԲ ռիսկերը և ապահովվեն հասանելիություն խոցելի խմբերի համար:

բ. Երբ ծրագրերն ավելի ապահով ու հասանելի են, մի կողմից մեծանում է շահառուների քանակը, և ստացվում են ավելի լավ արդյունքներ, մյուս կողմից ԳԲ խնդիրների լուծման ձախողումը նվազեցնում է հումանիտար միջոցառումների արդյունավետությունը բոլոր ոլորտներում:

2. Անկա գեղեցիկ անհավասարությունը հատկապես խոցելի է դարձնում կանանց և աղքատներին, մասնավորապես ճգնաժամի ընթացքում, քանի որ աճում է նրանց նկատմամբ գեղեցիկ բնության տարբեր տեսակների ռիսկը, այդ թվում՝ սեռական բնությունը, ընտանեկան բնությունը, պարտադրված ամուսնությունը ու սեռական շահագործումը:

ա. Երբ ընտանիքն ի վիճակի չէ բավարարելու սեփական կարիքները, կանայք և աղքատները ստիպված են դիմել կենսակերպի պահպանման վտանգավոր միջոցների, որոնք մեծացնում են գեղեցիկ բնության վտանգը նրանց նկատմամբ:

բ. Երբ կանանց ու աղքատներին չեն տրվում լիարժեք մասնակցության հնարավորություններ, նրանց կարիքներն ու նրանց տրամադրվող ծառայությունների հասանելիությունը հաճախ չեն արտացոլվում հումանիտար աջակցության տրամադրման գործընթացում:

ԱՌԱՋ ՆԱՅԵԼՈՎ. աշխատանքային խումբը ուսումնասիրում է ռեսուրսների տրամադրումը առանձին իրավիճակների համար, որոնցում դիտարկվում է շարժական կապի ծառայությունների, փոխադրման կամ վիրտուալ ծառայությունների հնարավորություն, օրինակ՝ թե՛ զի՛ կամ առցանց (անսանուն) գրույց: ԳԲ մասնագետները նաև ուսումնասիրում են ծառայությունների տրամադրման նոր մոդելներ՝ գեղեցիկ բնությանը հակազդելու, այն կանխարգելելու ու մեղմելու համար: Միավորված աշխատանքային խումբը ծրագրում է այդ կարիքների բավարարման համար ստեղծել գործիքներ ու ռեսուրսներ:

ՄԱՍՆԱԿՅԵԼՈՎ. եթե հետաքրքրված եք ձեր տարածքում գրպանի ուղեցույցի տարածմամբ կամ գեղեցիկ բնության ռիսկերի նվազեցմամբ արտակարգ իրավիճակներում, գրե՛ք gbv.guidelines@gmail.com հասցեով:

ԳՆԱԴՆԱԵԼՈՎ. աշխատանքային խումբը գնահատում է արտաքին դիտորդների ու խորհրդատուների տեխնիկական ու համակարգման նշանակալի աջակցությունը, որն ընդգրկված է ռեսուրսի մշակման գործընթացում հետևյալ կողմերի մասնակցությամբ. ACF, Camp Coordination and Camp Management Cluster, Child Protection Area of Responsibility, Inter-Agency Working Group on Reproductive Health in Crisis, International Committee of the Red Cross, IRC, Irish Consortium on Gender-based Violence, IOM, OXFAM, Shelter Cluster, Trgcaire, UNFPA in the Whole of Syria Region, UNHCR, UNICEF South Sudan, WASH Cluster, World Vision South Sudan, WFP South Sudan, Women's Refugee Commission.